ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ի Հնդկաստան վախճանեալ Սողոմոն Պապէի ժառանգները իրանց վկայականները իրանց հաւատարմատարի միջոցաւ մատուցած լինելով՝ նորին Ս. Եհափառութեան ի վաւերացումն, նորին Ս. Եհափառութիւն նախ քան զոցա վաւերացումը հաճեցաւ հրատարակել ի գիտութիւն, զի եթէ կան անձինք որ Սողոմոն Պապէի ժառանգակցութեան փաստեր ունին, առաջարկեն յընթացս երկուց ամաց, որպէս զի կարելի լինի գործին արդարութեամբ ընթացք տալ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Համառօտ հաշիւ վերաշինութեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մեծ-Աբխվալի գիւղի։

ՄՈՒՏՔ 1883 ԱՄՒ.

	ռուբ.	կ.
1. Եկեղեց. 817 ռուբլի և 26 կ. դրամագլխից կանխիկ դրամ	321	»
2. 491 ռուբ. 26 կ. պարտքի հաշվում պարտապանների չքաւորութեան պատճառաւ ստացած էրեղէնների վաճառումից	316	62
3. Հին եկեղեցւոյ փայտերի վաճառումից . . .	211	5
4. Նուէրներ և այլ և այլ մուտքեր եկեղեցւոյ օգտին . .	364	68
5. Տեղական ժողովրդի համախօսականով՝ նոցանից հանգանակած	1950	75
6. Եկեղեցւոյ շինութեան համար ի պարտ վեր առեալ դրամները	226	»
Գումար մտից	3390	10

ԾԱԽՔ 1883 ԱՄՒ.

1. Եկեղեցին վերանորոգող վարպետներին ընդ ամենը . .	2950	55
2. Այլ և այլ հարկաւոր ծախսեր և փոխառեալ դրամների տոկոս	455	60
Ծախսուց գումարը	3406	15

Հաւասարակշիռ	Ծախք	3406	15
	Մուտք . . .	3390	10
	Պարտք . .	16	5

ՄՈՒՏՔ 1885 ԱՄՒ.

1. Տեղական ժողովրդի նուէրներից գոյացած . . .	522	50

ԾԱԽՔ 1885 ԱՄՒ.

1. Միայն աշխատութեան վարձ եկեղեցւոյ ծածքը սալողին .	256	»
2. Քարհատին իւր քարերի համար	24	50
3. 1883 թուից եկեղեցւոյ շինութեան համար փոխ առեալ դրամները վճարեցինք փոխատուներին իրեն տոկոսներովը ընդ ամէնը	246	»

4, 1883 թուից ծախսից աւելացած գումարի վճարումն	20	»
Գումարը . .	522	50

ՄՈՒՏՔ Ի 1886 ԱՄԻ.

1, Եկեղեցւոյ երեսփոխանից ստացեալ դրամներ, որոնք գոյացել են եկեղեցւոյ զանազան արդիւնքներից . . .	41	»
2, Տեղական հասարակութիւնից հանգանակած դրամներ .	40	»
Գումարը . .	81	»

ԾԱԽՔ 1886 ԱՄԻ.

1, Վճարած է ի գին կրի . . . . . Ծանօթութիւն, մնացեալ կիրը գեղացիները ձրի բերել են միւս նիւթերի հետ։	11	»
2, Եկեղեցւոյ ներսը սուաղողի վարձք ընդ ամէնը . .	70	»
Գումարը . .	81	»

Ուրեմն Մեծ-Արխալի գեղի բնակիչները 1883 թ ի Մայիսի 4 ից (հիմքը դրած օրից) մինչև նոյն թիւ Նոյեմբերի 20 ը (եկեղեցին օծած օրը) 3406 սաղուրլի և 39 կպկ. ծախսով առանց ուրիշ աշխատութեան ունեցան $4\frac{1}{3}$ սաժէն բարձրութեամբ $9\frac{1}{3}$ սաժէն երկարութեամբ, $5\frac{1}{3}$ սաժէն լայնութեամբ շորս սեան վերայ կանգնած մի հոյակապ պատուական շէնքով և դրսից կամարներով զարդարուած Եկեղեցի, բացի ծածքի վրայի սալուածքը և ներսի կողմից սուաղը որոնք կատարվել են, առաջինը անցեալ 1885 թուոյ մէջ և երկրորդը ներկայ թուոյս մէջ դարձեալ նոյն գեղի ժողովրդի աշխատութեամբ։

Նոր-ընծայ Ղևոնդ քահանայ Տէր Մկրտչեան Անդանոսեանց։

Բարեպաշտուհի Տիկին Շարլէթ Ճ. Ս. Կոստանդիանոսի Նոր Ջուղայեցի, Վեհափառ Հայրապետի անուամբ ուղարկել էր ի յիշատակ Սրբոյ Էջմիածնի իւր ձեռքով պատրաստած կարած և հիւսածոյ զանազան կտորներ

Վեհափառ Հայրապետը գոհութեամբ ընդունելով Տիկնոջ չերժեռանդն զգացմանց հաւաստիքը՝ հաճեցաւ ամսոյս 7 ին համար 263 Հայրապետական կոնդակով օրհնել յիշեալ մեծահաւատ և բարեսէր Տիկնոջը։

Նուիրանաց մէջ նշանաւորներն յանձնուեցին ի գործադրութիւն Մայր Տաճարի, որք են

1. Աւագ սեղանոյ մի ծածկոց՝ մօտ երեք արշին երկայնութեամբ և երկու արշին լայնութեամբ ոսկեթել ծոպերով եզերաւորեալ։ այդ ծածկոցը որ պատրաստուած է բիճաչափ քառակուսի զանազան գոյնի մետաքսեայ կտորներից, Վեհափառ կաթուղիկոսի հաճութեամբ Աւագ բեմի վերայ տարածուեց իբրև օթոց Ս. Միւռոնի կաթսայի։
2. Աւագ սեղանոյ մի փոքր ծածկոց։
3. Ձեռաց խաչի մի քօղ։
4 Ամենի համար բրդեայ մի հիւսուածոյ։

Ամենաբարին Աստուած բարութեամբ լցնէ յիշեալ մեծահաւատ Տիկնոջը ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Ամսոյս 5 ին Վրաստանի Էկզարխ և Կարթալինայի ու Կախեթու Արքեպիսկոպոս Բարձր Սրբազան Պաւել Երևանայ Պ. Նահանգապետի և այլոց ուղեկցութեամբ յետ կէս աւուր 1 ժամին եկաւ Մայր Աթոռս, և երեք ժամու չափ Մայր Աթոռումս սիրալիր ընդունելութեամբ Վեհափառ Հայրապետից հիւրասիրուելուց յետոյ վերադարձաւ։